

Միջնադարեան հայ բանաստեղծներու նուիրուած սակաւաթիւ հատորներու վրայ կու գայ աւելնալ Գնունեաց բանաստեղծ եպիսկոպոսի տաղերու հրատարակութիւնը: Այս տեղամփոփուած են 10 Տաղ եւ 12 Կաֆայ. բայց ապահովապէս, ինչպէս վստահ ենք, այս աղբատ թիւը չի ներկայացըներ Զարբիայի բանաստեղծութեանց լիակատար հաւաքածոն, այլ ասոնցմէ դուրս կան ուրիշներ ալ, որոնք կը սպասեն հրատարակող ձեռքի:

Ներկայ հրատարակութիւնս լոյս տեսած է կանխաւ «Հանդէս Ամսօրեայ», ուսումնաթերթի մէջ¹. արտատպութիւնս նոխացած է միայն Բաղնայրանով, որ կարելոր էր լաւ իմանալի ընելու համար տաղերը տանիկ, արաբ եւ պարսիկ լեզու-

¹ Հանդ. Ամս. 1909, թ. 8, էջ 231-238, թ. 9 10, էջ 279-288, թ. 11, էջ 341-345: